ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.	Անունը, ազգանունը	Արմեն Հարությունյան
2.	Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
3.	Գործուղման վայրը և ժամկետը	Հռոմ (Իտալիայի Հանրապետություն) 2018 թվականի հունվարի 10-12-ը
4.	Հրավիրող կողմը	ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ, Գիտության և գործընկերության անկախ խորհուրդ, Համաշխարհային բանկ
5.	Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը	Մասնակցություն Կայուն զարգացման նպատակներ 1-ի և 2-ի իրականացմանն ուղղված գյուղատնտեսության և գյուղական զարգացման հետազոտության և ներդրումների հարցերով խորհրդակցությանը
6.	Քննարկված թեմաները	Խորհրդակցության ընթացքում քննարկվել են գյուղատնտեսության և գյուղական զարգացման հետազոտությանը վերաբերող հարցեր և դրանց առնչությունը ներդրումներին և համակարգված քաղաքականությանն ու ծրագրերին՝ Կայուն զարգացման նպատակներ 1-ի և 2-ի իրականացման համատեքստում: Մասնավորապես շեշտադրվել են հետևյալ զարգացման ուղղությունները. – փոքր գյուղացիական տնտեսությունների զարգացման հնարավորությունները և մարդկային աշխատանքի արդյունավետության բարձրացման հետ կապված հարցերը, – գնահատվել է փոքր գյուղացիական տնտեսությունների զարգացման վերաբերյալ համաշխարհային փորձը, – ներկայացվել են Կայուն զարգացման նպատակների իրականացմանն ուղղված ջանքերը և դրանց չափմանը վերաբերող մեթոդաբանությունը:

		Խորհրդակցության ժամանակ ներկայացվել են Հայաստանում իրականացվող բարեփոխումները, որոնք ուղղված են պարենային անվտագության մակարդակի բարձրացմանը, աղքատության նվազեցմանը և կայուն գյուղատնտեսության զարգացմանը:
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը	Հանդիպումներ են կայացել ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Տարածաշրջանային մասնաճյուղերի համակարգման գրասենյակի տնօրեն Կրիստինա Ամարալի և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի փոխնախագահ Փոլ Վինտերսի հետ: Քննարկվել են համագործակցության խորացման և գյուղատնտեսական ռեգիստրների ստեղծմանը վերաբերող հարցեր:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը	ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Տարածաշրջանային մասնաճյուղերի համակարգման գրասենյակի տնօրեն Կրիստինա Ամարալի հետ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել դիտարկել զարգացման ծրագրերի ֆինանսավորման հնարավորությունները տարածաշրջանային գրասենյակների միջոցներով:
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	Առաջարկվում է ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության և մի շարք այլ կազմակերպությունների հետ քննարկել գյուղատնտեսական ռեգիստրների ստեղծման ծրագիր նախապատրաստելու հնարավորությունները:
10.	Գործուղվողները	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Արմեն Հարությունյան
11.	Ստորագրությունը, ամսաթիվը	16.01.2018թ.